ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքել ցանկացող սպառողները (որոնք հանդիսանում են ՀԷՑ ՓԲԸ սպառողներ, սակայն ցանկանում են դուրս գալ էլեկտրաէներգիայի ազատ շուկա և մասնակցել մատակարարման խմբում՝ որպես սպառող) պետք է իրենց մտադրության մասին գրավոր կամ բանավոր հայտնեն «Տավուշէներգո» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով իրենց ընկերության տեխնիկական տվյալները՝ սպառողի անվանումը, լարման կատեգորիան, սպառման ծավալները, բաշխման պայմանագրերը, սպառման տեղամասերի հասցեները և այլ անհրաժեշտ տվյալներ: Սպառողը պարտավոր է ներկայացնել նաև ԱՖՎ կայան ունենալու փաստի և տեղադրելու մտադրության մասին:

2. Սպառողը տեղեկացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված մատակարարման պայմանագրի խզման, այդ թվում նաև Արևային ՖԿ հաշվառման կարգի փոփոխության մասին:

3. Նշված տեղեկատվության ստացումից հետո «Տավուշէներգո» ՍՊԸ-ն ներկայացնում է գնային առաջարկ սպառողին:

4. Առաջարկն ընդունելուց հետո սպառողն իր սպառման տեխնիկական վիճակը բերում է Շուկայի կանոններով նախատեսված ընդունելի վիճակի (օրինակ՝ իր ենթասպառողների հաշվիչների տեղեկատվության հասանելիության ապահովումը):

5. Այնուհետև սպառողի հետ կնքվում է էլեկտրաէներգիա մատակարարման պայմանագիր և «Տավուշէներգո» ՍՊԸ-ն կազմում է համապատասխան փաստաթղթեր՝ Շուկայի օպերատորին ներկայացնելու նպատակով:

6. Համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 6 աշխ. օրվա ընթացքում սպառողը ներառվում է «Տավուշէներգո» ՍՊԸ մատակարարի խումբ՝ որպես սպառող:

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում վճարումների ուշացման կամ չկատարման դեպքում դադարեցվում է «Տավուշէներգո» ՍՊԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարումը:

8. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում առաջացած բողոքների, հարցերի կամ տեխնիկական խնդիրների դեպքում սպառողը դիմում է «Տավուշէներգո» ՍՊԸ-ին՝ գրությամբ (էլ.փոստ) կամ բանավոր կերպով: Բողոքներին «Տավուշէներգո» ՍՊ ընկերությունը պատասխանում է 5 աշխատանքային օրվա ընթացքում: